# *ԿԱՐԾԻՔ*

## ՍՈՆԳ ԺԵՅՈՒԻ «ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺԹ.00.01 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածուի հավակնորդ՝ Սոնգ Ժեյուի ատենախոսությունը նվիրված է մեր ժամանակների կարևոր և մշտապես ուշադրության կենտրոնում գտնվելու անհրաժեշտությամբ պայմանավորված հիմնահարցի՝ ուսանողների հոգեբանական բարեկեցության խնդիրներին: Սոնգ Ժյուն այս թեման ուսումնասիրել է հոգեբանական բարեկեցության մեջ ուսանողների ներգրավվածության տարբեր կողմերի և անհատական տարբեր գործոնների փոխկապվածության տեսանկյունից:

Աշխատանքի արդիականությունը միանշանակ է, ավելին, այն դուրս է նաև հայաստանյան իրականությունից և, անխոս, կարող է արտացոլել ամբողջ աշխարհում երիտասարդներին բուհական կյանքում ներգրավելու գործընթացը: Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելը հաճախ սրում է երիտասարդության շրջանի զարգացման փուլը, որը բնութագրվում է նշանակալի փոփոխություններով՝ երիտասարդները բախվում են նոր և տարբեր բնույթի մարտահրավերների, ինչպիսիք են ուսանողների ինքնուրույնության և ինքնավարության ձևավորմանը զուգընթաց առաջ եկող ակադեմիական ոլորտին հատուկ պահանջներ, սոցիալական նոր և ընդլայնված ցանցեր, շատ դեպքերում նաև ֆինանսական կամ ընտանեկան պարտավորություններ, նոր միջավայր՝ իր սոցիալական նորմերով և կանոններով: Այս փոփոխությունները երիտասարդի կյանքում կարող են ստեղծել պայմաններ, որոնք ազդեն իր, որպես ուսանող հոգեվիճակի և, ընդհանուր առմամբ նրա հոգեկան առողջության վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության բաժնում գրագետ կերպ ներկայացվում է ամբողջ աշխատանքը համառոտ տարբերակով, որից կարելի է պատկերացում կազմել, ատենախոսի թեզի թեմային տիրապետելու մակարդակի մասին: Հիմնավոր ձևով ցույց է տրված աշխատանքի արդիականությունը, ուսումնասիրման նպատակը, հետազոտական խնդիրները, վարկածը՝ իր ենթավարկածներով, ուսումնասիրման առարկան և օբյեկտը, աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքերը, մեթոդաբանությունը, որը ներառում է մեթոդները, ընտրանքը և գործիքակազմը, ինչպես նաև ներկայացված են աշխատանքի նորույթը, տեսական և գործնական նշանակությունները, պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի հուսալիությունն ու հավաստիությունը, աշխատանքի արդյունքների փորձարկման և հրապարակային քննարկման մասին տեղեկատվությունը, ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է բարեկեցության հիմնախնդիրը ակադեմիական միջավայրում: Այստեղ վերլուծվում է հոգեբանական բարեկեցության հիմնախնդրի տեսական և կիրառական մոտեցումներ, ինչպես նաև անդրադարձ է կատարվում հոգեբանական բարեկեցության խնդրին՝ բուհերի ուսանողների շրջանում:

Երկրորդ գլուխը հեղինակը նվիրել է քննարկելու ուսանողների բարեկեցությունը պայմանավորող գործոններին: Նա առանձնացրել է ուսանողների բարեկեցությունը կանխորոշող սոցիալ-հոգեբանական և համատեքստային գործոններ՝ ուսանողների ներգրավվածության դերի տեսանկյունից, ինչպես նաև ներկայացնում է անհատական տարբերությունների կանխատեսող նշանակության շուրջ քննարկումները:

Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքն են կազմում սուբյեկտիվ բարեկեցության և հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրների վերաբերյալ Էդ. Դիեների, Կառոլ Ռիֆֆի տեսությունները, Ռիչարդ Ռայենի և Էդվարդ Դեցիի տեսությունները, Թորի Հիգինսի վարքի կարգավորման տեսությունը, Քեռոլ Դվեկի աճին ուղղված մտածելակերպի տեսությունը, ինչպես նաև ուսանողների ներգրավվածության վերաբերյալ Կատարինա Սամելա Արոյի, Կատյա Ուպադայայի, Ջերեմի Ֆիննի և Կայլա Զիմերի կողմից առաջարկված մոտեցումները:

Հեղինակը էմպիրիկ հետազոտության համար առաջարկել է հիմնական վարկած, այն է՝ բուհի ուսանողների հոգեբանական բարեկեցությունը բազմաչափ երևույթ է, որը նշանակալիորեն և դրականորեն կանխորոշվում է բուհական միջավայրում ուսանողների ներգրավվածության և վարքի կարգավորման կոգնիտիվ ու դրդապատճառային գործոնների համատեղ ազդեցությամբ: Այս վարկածն ապացուցելու կամ հերքելու նպատակով մշակվել է 2 փուլով ուսումնասիրում իրականացնելու ճանապարհը:

Առաջին ուսումնասիրությունը իրենից ներկայացնում է անձի աճին ուղղված մտածելակերպը և վարքի կարգավորման կողմնորոշումը որպես ուսանողների հոգեբանական բարեկեցության կանխորոշիչներ ուսումնասիրելու հարցումը: Այս հարցումն ուղղված էր ուսումնասիրելու դրդապատճառային և կոգնիտիվ անհատական տարբերությունների (աճին ուղղված մտածելակերպ և վարքի կարգավորման առաջխաղացման/կանխարգելման կողմնորոշում) կապը ուսանողների հոգեբանական բարեկեցության հետ և վերլուծել դրանց կանխատեսող ազդեցությունը: Հետազոտության մասնակիցները Երևանի տարբեր բուհերից հավաքագրված 18-25 տարեկան 332 ուսանողներ են, որոնք սովորել են բակալավրի կրթական ծրագրերում, որոնցից 25%-ը արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 75%-ը՝ իգական: Այս հարցումն իրականացնելու ժամանակ օգտագործվել են Աճին միտված մտածելակերպի սանդղակը, որը հիմնված է Քերոլ Դվեկի տեսության վրա, նախատեսված է չափելու անհատի հիմնարար համոզմունքները իրենց ունակությունների (մասնավորապես՝ ինտելեկտի) փոփոխականության վերաբերյալ, կիրառվել է նաև Վարքի կարգավորման կողմնորոշման հարցարանը հիմնված է Թորի Հիջինսի տեսության հիման վրա: Ատենախոսության հեղինակը «Ուորվիկ-Էդինբուրգի հոգեկան բարեկեցության սանդղակի» օգնությամբ չափել է նաև մասնակիցների բարեկեցությունը: Այս սանդղակը լայնորեն կիրառվող գործիք է՝ նախատեսված դրական հոգեկան առողջությունը և հոգեբանական գործառնությունը գնահատելու համար:

Երկրորդ ուսումնասիրությունը վերաբերում էր ուսանողների ներգրավվածությանը որպես հոգեբանական բարեկեցության կանխորոշիչ: Այն իրականացվել էր հարցման միջոցով, որն ուղղված էր ուսումնասիրելու սոցիալ-հոգեբանական վարքային գործոնների (ակադեմիական և սոցիալական ներգրավվածություն) կապը ուսանողների

հոգեբանական բարեկեցության հետ և վերլուծել դրանց կանխատեսող ազդեցությունը: Հարցումը ներառել էր մի քանի ստանդարտացված սանդղակներ՝ ուսումնասիրվող փոփոխականները գնահատելու համար: Ուսանողների ներգրավվածությունը գնահատվել է «Բարձրագույն կրթության ուսանողների ներգրավվածության սանդղակի» ադապտացված տարբերակի միջոցով, որը վավերացված գործիք է՝ նախատեսված չափելու, թե որքանով են ուսանողները ներգրավված բուհական միջավայրում:

Ստացված արդյունքները մշակվել են օգտագործելով Պիրսոնի փոխկապակցվածության (կորելյացիոն) վերլուծությունը՝ հոգեբանական բարեկեցության, աճին միտված մտածելակերպի, առաջխաղացման վարքային կողմնորոշման և կանխարգելման վարքային կողմնորոշման միջև կապերն ուսումնասիրելու համար, ինչպես նաև իրականացվել է քառափուլ բազմակի ռեգրեսիոն վերլուծություն՝ կանխատեսելու հոգեբանական բարեկեցությունը՝ հիմնվելով ժողովրդագրական փոփոխականների, աճին միտված մտածելակերպի, առաջխաղացման կողմնորոշման և կանխարգելման կողմնորոշման վրա: Սեռային տարբերությունների վերլուծությունը բացահայտել է իգական սեռի ուսանողների առանձնահատուկ պրոֆիլը:

Հեղինակը ստացված արդյուքները ենթարկել է գիտական չափանիշներին համապատասխան վերլուծության և դրանց հիման վրա հանգել է եզրակացությունների ու դուրս բերել գործնական առաջարկություններ: Այդ եզրակացություններն ու գործնական առաջարկները, իրապես ուշադրության արժանի են, մասնավորապես, գործնական առաջարկները, որոնք կարող են օգտակար լինել բոլոր բուհերի համար: Համեմատական վերլուծություններն ու դրանց թվային դրսևորումները մանրամասն ներկայացված են աղյուսակներում՝ հավելվածների տեսքով:

Հարկ է նշել, որ ատենախոսությունը շարադրված է գրագետ, գովելի է ատենախոսի հետևողականությունը արդյունքների մանրամասն ներկայացման և վերլուծության մեջ: Ատենախոսության հետ ներկայացվող սեղմագիրը ամբողջովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, հիմնական դրույթները և եզրակացությունները:

Այնուհանդերձ աշխատանքում կան որոշ դիտարկումներ և ցանկություններ.

1. Իրականացված հետազոտությունը կրում է քանակական բնույթ, որն ունի տպավորիչ մասնակցություն, սակայն, նման հետազոտություններում օգտակար և հետաքրքիր է լինում նաև ունենալ որակական տվյալներ, օրինակ, կարելի էր ունենալ ֆոկուս խմբեր կամ կազմակերպել հարցազրույցներ ուսանողների հետ, նույնիսկ իրական պատմություններ, սեփական փորձի նկարագրություն և դրանք ներառել տվյալների վերլուծության մեջ, ինչը մեր կարծիքով, կհարստացներ աշխատանքը:

2. Չնայած այն հանգամանքին, որ օգտագործվել են հետազոտական խնդրին վերաբերող համապարփակ հարցարաններ, հարցումներին մասնակցել են տպավորիչ թվով ռեսպոնդենտներ և հավաքվել են մեծ ծավալի էմպիրիկ տվյալներ, կարելի էր նաև փորձագիտական հարցազրույցներ ունենալ մի քանի բուհերի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ, հետագայում համադրելու դրանք հարցումների արդյունքների հետ:

3. Հետազոտական տվյալների առաջնային վերլուծության փուլում և նախնական եզրագանգումների ձևակերպման ժամանակ, կարելի էր դրանք շրջանառել հայաստանյան մի քանի բուհերում, մասնավորապես, Երևանում տեղակայված և ստանալ նրանց կարծիքը՝ դրանց կիրառելության տեսանկետից:

4. Հետազոտությունները ցույց են տվել սեռային տարբերություններ, մասնավորապես, բացահայտվել է իգական սեռի առանձնահատուկ պրոֆիլ: Կարելի էր և շատ օգտակար կլիներ, եթե տեսական մասում մի ենթագլուխ նվիրվեր նաև գրականության մեջ եղած սեռային առանձնահատկությունների հարցին, առավել ևս, որ հեղինակը ազատ տիրապետում է անգլերեն լեզվին և ամբողջ օգտագործված աղբյուրները անգլերեն բնագրեր են:

Վերոնշյալ դիտարկումները բնավ չեն իջեցնում աշխատանքի արժեքը: Կատարված է ծավալուն աշխատանք, որն ունի տեսական և կիրառական նշանակություն:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը կարող ենք եզրակացնել, որ Սոնգ Ժեյուի «Անձնային առանձնահատկությունների և ակադեմիական ներգրավվածության դերը ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ» խորագրով /ԺԹ.00.01 մասնագիտությամբ/ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

հայցման ատենախոսությունը համապատասխանում է հաստատված թեմայի թվանիշին. հրատարակված հոդվածներում պահպանված է ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը, այն ավարտուն աշխատանք է և համապատասխանում է «Գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» 08.08.1997թ. ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված 7-րդ կետի պահանջներին այն է՝ գիտական կարևոր խնդրի առաջադրում, իսկ Սոնգ Ժեյուն արժանի է ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ընդդիմախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան

Կամո Վարդանյանի ստորագրությունը
հաստատում եմ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
գիտական քարտուղար Հակոբ Թադևոսյան

19.06.2026թ.